



ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանում ԱՄՆ «Կենսաբանական զենքի» լաբորատորիաների մասին ապատեղեկատվություն տարածող խմբերը և մոտիվները

Վերջին ամիսներին հայկական և ռուսական որոշ ԶԼՄ-ներ պարբերաբար իրար հղում տալով՝ անդրադառնում են ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի «Վտանգների նվազեցման գործակալության» ֆինանսավորմամբ 2016 թվականին Երևանում, Գյումրիում և Իջևանում բացված ռեֆերենս լաբորատորիաների գործունեությանը:

Հրապարակումներում [պնդում են](#), որ լաբորատորիաներն ունեն երկակի նշանակություն և վտանգ են ներկայացնում «ՌԴ ռազմավարական դաշնակից Հայաստանի բնակչության» համար, քանի որ կարող են կենսաբանական զենք ստեղծել:

Այս պնդումները [հերքեցին](#) ոլորտի բոլոր պատկան մարմինները: Հայաստանի Առողջապահության նախարարության մամուլի խոսնակ Անահիտ Հայաթյանը նման հարցից զարմանք ապրեց և միանշանակ հերքեց այդպիսի տեղեկությունը, իսկ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից պնդումն անհեթեթություն որակեցին:

Հարցին [անդրադարձավ](#) նույնիսկ Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը՝ տեղեկությունները անվանելով քարոզչական: Իսկ լաբորատորիաների գործունեության վերաբերյալ դեսպանատունը առաջարկեց տեղեկանալ Հայաստանի առողջապահության և գյուղատնտեսության նախարարություններից, քանի որ դրանք գտնվում են հենց վերջիններիս բալանսի վրա:

Սակայն, չնայած պաշտոնական հերքումների, որոշ ուժեր շարունակում են տարածել ԱՄՆ-ի կողմից Հայաստանում պատրաստվող կենսաբանական զենքի մասին ապատեղեկատվությունը:

Մի կողմ թողնելով հարցի բովանդակային քննարկումը, «Իրազեկ քաղաքացիների միավորումը» որոշեց անդրադառնալ այդ ապատեղեկությունները համառորեն տարածող խմբերին:

«Հանուն ինքնիշխանության վերականգնման» նախաձեռնություն

Լաբորատորիաների աշխատանքի մասին առաջին անգամ նման պնդումով հանդես եկավ



«Հանուն ինքնիշխանության վերականգնման» նախաձեռնության անդամ [Հայկ Այվազյանը](#) «Բժշկական-կենսաբանական լաբորատորիաները Հայաստանի անվտանգության և ինքնիշխանության համատեքստում» թեմայով համաժողովի ընթացքում:

Բանախոսները հիմնական շեշտը դրել են ԱՄՆ-ը Հայաստանի համար ռազմական սպառնալիք

ներկայացնելու վրա և հենց այդ համատեքստում էին բժշկական նշանակություն ունեցող լաբորատորիաները ներկայացնում որպես «ռազմական օբյեկտ»:

Հարկ է ավելացնել, որ համաժողովին հրավիրված էին նաև մասնակիցներ ՌԴ-ից: Մասնավորապես, համաժողովին զեկույցով հանդես եկավ Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Ուրալի տարածքային կենտրոնի ղեկավար Դմիտրի Պոպովը (թեման՝ «ԱՄՆ ռազմա-կենսաբանական գործունեությունը հետխորհրդային տարածքում, առկա սպառնալիքները ՀԱՊԿ անդամ երկրների համար և հնարավոր հակազդեցության միջոցները»):

Հայտարարությունները, որոնք արվեցին նույն շենքում, որտեղ տեղակայված է ռուսական Սպուտնիկ լրատվական գործակալությունը, անմիջապես տեղադրվեց վեբքինիս [կայքում](#): Սպուտնիկին միացավ [nyut.am](#) կայքը, [Արարատ](#) հեռուստաընկերությունը և [iravunk.am](#) [կայքը](#):

Ապատեղեկությունների տարածումը մի պահ դադարեց այն ժամանակ, երբ ապատեղեկատվության դեմ պայքարով զբաղվող [SUT.am](#) կայքը հրապարակեց ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված ուշագրավ մի գրություն, ըստ որի ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաձյուղին Ռուսաստանի կողմից տրամադրվել են 14 տեսակի սարքեր-սարքավորումներ և լաբորատոր կահույք՝ սանիտարա-քիմիական լաբորատորիայի համար: Այլ կերպ ասած, «Կենսաբանական զենքերի» լաբորատորիան նաև ՌԴ-ից է աջակցություն ստանում:

Որոշ ժամանակ անց, սակայն, կեղծիքը կրկին հայտնվեց շրջանառության մեջ, այս անգամ արդեն ռուսական [Regnum](#) գործակալության միջոցով (այս գործակալությունը հայտնի է որպես Կրեմլյան քարոզչության գործիքներից մեկը):

Պատկերն իր ամբողջական տեսքն է ընդունում, երբ պարզվում է, որ ռուսական կայքի հրապարակման հեղինակը կրկին «Հանուն ինքնիշխանության վերականգնման» նախաձեռնության անդամ Հայկ Այվազյանն է: Այվազյանը և իր նախաձեռնությունը նախկինում աչքի է ընկել «Շնտանեկան բռնության մասին» օրենքի դեմ պայքարով:

<https://regnum.ru/news/polit/2274527.html>

Главное	Новости	Аналитика	В России	За рубежом	Видео
КРАСНАЯ ВЕЩА. ФСБ получила полномочия изымать землю и недвижимость					
NBI	Радио REGNUM: Аналитика. Главное за 14 июня				
NBI	США против Nord Stream-2: «Это политическое противостояние»				

Расходы США на биологические лаборатории в Армении говорят об их двойном назначении

Политика

Анализ касательно целей существования референс лабораторий МО США в Армении

«Հանուն ինքնիշխանության վերականգնման» նախաձեռնությունը ակտիվորեն խրախուսում է հայ-ռուսական հարաբերությունների մերձեցումը, փաստացի գովազդում է ՀԱՊԿ-ը և ԵԱՏՄ-ն, Ռուսաստանը ներկայացնում է որպես մեր անվտանգության անայլընտրանք երաշխավոր, քննադատում ԱՄՆ-ն, Եվրոպայի ու ՆԱՏՕ-ն:

Հատկանշական է, որ նախաձեռնության [կայքի](#) ռուսերեն տարբերակը շատ ավելի ծավալուն և արագ թարմացվող է, քան հայերենը:

ՀԱՄԱԿ կուսակցություն

Ռուսական հետքը սակայն շարունակվեց, երբ [ՀԱՄԱԿ](#) կուսակցության նախագահ Արման Ղուկասյանը և փոխնախագահ Շովինար Կոստանյանը հանդես եկան մամուլի [ասուլիսով](#), որտեղ կրկին հայտարարեցին նույն ապատեղեկատվությունը:



Այս անգամ բանախոսները փորձում էին այլ մոտեցումներով հիմնավորել, որ այդ լաբորատորիաներում հավաքագրվող տեղեկությունները կարող են օգտագործվել կենսաբանական զենքի ստեղծման համար:

Ասուլիսը հիմնականում լուսաբանեցին ռուսական և ռուսալեզու կայքերը՝ [eadaily.com](#), [arminfo.info](#), [yerkramas.org](#), [boeingisback.com](#), [comment.am](#), [asekose.am](#) և այլն:

Թե՛ այս անձինք, թե՛ իրենց ասուլիսը լուսաբանած լրատվամիջոցների մի մասը ևս աչքի են ընկել «Ընտանեկան բռնության մասին» օրենքի դեմ պայքարով՝ ընդհանուր առմամբ ներկայացնելով այն որպես «եվրոպական պարտադրանք ընդդեմ Հայաստանի» (այդ մասին մեր զեկույցը կգտնեք [այստեղ](#)):

[Արման Ղուկասյանը](#) և [Շովինար Կոստանյանը](#) հայտնի են համացանցում իրենց ռուսամետ դիրքորոշմամբ և ակտիվ հրապարակում են լուսանկարներ ՌԴ դեսպանի, ինչպես նաև ռուսական հայտնի քաղաքական գործիչների հետ: Նրանք նաև աչքի են ընկել Հայաստանում Բրիտանական դեսպանատան մոտ իրականացված [ցույցով](#):

Հատկանշական է, որ Արման Ղուկասյանը և Շովինար Կոստանյանը քաղաքական գործունեություն ծավալելու հետ մեկտեղ, ակտիվ են նաև ՀԿ դաշտում: Նրանք նաև ղեկավարում են «Միջազգային հումանիտար զարգացում» ՀԿ-ն, որը ևս անմասն չի մնում այս քարոզչությունից: Այդ կազմակերպությունը դեռևս [2015](#)



[թվականից](#) թիրախավորում է հայկական հասարակական դաշտի մի շարք հայտնի և հեղինակավոր դերակատարների՝ «Եվրասիա» – համագործակցության հիմնադրամը, Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը և այլն:

Հիշեցնենք, որ Ղուկասյանը հանդես էր եկել հայտարարությամբ, իբրև մի շարք հասարակական կազմակերպություններ և լրագրողներ ամռանը ՊՊԾ գնդի գրավման օրերին փորձում էին Հայաստանում «գունավոր» հեղափոխություն իրականացնել: Ղուկասյանի այդ հարցազրույցը հրապարակվել է ռուսական [sputnikarmenia](#) կայքում: Հայաստանում «Գունավոր հեղափոխության» իր այդ գաղափարները Ղուկասյանը ներկայացրել է նաև [Արդարացիության](#) և [Ազգայնականության](#):

Ղուկասյանը նաև խոստացել էր հրապարակել «ամերիկացի գործակալների ցանկը»: Օրեր անց արևելյան Ուկրաինայում (Դոնեցկի ինքնահռչակ հանրապետությունում) գործող ռուսամետ մի բլոգեր հրապարակեց [տեսանյութ](#), որում որոշ քաղաքական գործիչներ, ընդ որում, ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր մեղադրվում են ԱՄՆ «գործակալներ»

լինելու մեջ: Տեսանյութում նաև հրապարակվեցին ԱՄՆ մի շարք դիվանագետների անձնագրերի սքաննեքը: Նշենք նաև, որ հիմնավոր [սպացույցներ](#) կան, որ դրանք, ստացվել էին ՌԴ ԱԴԾ-ի (ՓՇԵ) միջոցով:

Հարկ է նկատել, որ Արման Ղուկասյանն ու Ծովինար Կոստանյանը այժմ հանդես են գալիս նոր «Ժողովրդի ձայնը» ակումբի անունից, որպես «փորձագետներ» (թերևս անհասկանալի է, թե ի՞նչ փորձագետներ):

Ռուսաստանյան հիմնադրամների ու քարոզչամեթոդների հետքեր

Ֆեյսբուք սոցիալական ցանցում խնդրո առարկա հրապարակումները ակտիվ տարածում է նաև «[Լույս](#)» տեղեկատվական-վերլուծական կենտրոնը (ղեկավարը՝ Հայկ Այվազյանը): Այս խմբում հիմնականում հանդիպում են ռուսերեն լեզվով հրապարակումներ, որոնք ևս հիմնականում հակաարևմտյան բնույթի են:



Նշենք որ «Լույս» տեղեկատվական-վերլուծական կենտրոնը մոտ մեկ ամիս առաջ դիմել է [գրանտի](#) Գորչակովի անվան ռուսական ֆոնդին, որի [նոգաբարձուների խորհրդի](#) նախագահը անձամբ Ռուսաստանի Արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովն է: «Գորչակովի» հիմնադրամը ստեղծվել է 2010 թվականի փետրվարի 2-ի ՌԴ այն ժամանակվա նախագահ Դմիտրի Մեդվեդևի հրամանով և ֆինանսավորվում է անմիջապես ռուսական պետական բյուջեից:

Ապատեղեկությունների տարածման գործում հետ չի ընկնում նաև «[Երևանյան աշխարհաքաղաքական ակումբը](#)» («Ереванский геополитический клуб»), որտեղ կրկին հանդիպում ենք վերոնիշյալ անձանց մեծ մասին: Այստեղ Հայաստանին վերաբերող բոլոր «վերլուծությունները» ներկայացված են ռուսերեն լեզվով, կարծես դրանք միտված են ոչ թե հայաստանցիներին, այլ ռուսաստանցիներին:

Այս ակումբի քննարկումներից մեկին մասնակցել է նաև ռուսական [պետական «Россотрудничество»](#) դաշնային գործակալության Երևանյան գրասենյակի ղեկավար և Հայաստանում ՌԴ դեսպան Իվան Վոլինկինի օգնական Մարկ Կալինինը, իսկ նրա կողքին նստած է ՀԱՍԱԿ կուսակցության նախագահ Արման Ղուկասյանը:

Նշվածին հավելենք, որ այս անձանց հրապարակումները հիմնականում տարածում են պրոռուսական համբավ ունեցող ՋԼՄ-ները ([armeniasputnik.am](#), [geoclub.info](#), [kavkazoved.info](#), [openarmenia.com](#), [verelq.am](#), [regnum.ru](#), [fondres.ru](#), [eadaily.com](#), [eurasianinfoleague.com](#), [armsovereignty.com](#) և այլն):



Օրինակ, Ռուսաստանյան «[Սպուտնիկ](#)» ռադիոկայանի հայաստանյան մասնաճյուղը, որն ակտիվորեն տարածում է կենսաբանական զենքի մասին հրապարակումները, պատկանում է

«Ռուսսիյա Ստոլնյա» ռուսաստանյան [պետական](#) ինֆորմացիոն գործակալությանը, որի [գլխավերևում](#) է Կրեմլի հայտնի պրոպագանդիստ Դմիտրի Կիսելյովը:

Եզրահանգումներ

Այսպիսով, կարելի է վստահաբար պնդել, որ «Հայաստանում ամերիկյան կենսաբանական զենքի» մասին ապատեղեկատվական հրապարակումների և բարձրացված աղմուկի հեղինակները կամ պրոռուսական, կամ հենց ռուսաստանյան քարոզչության տարածողներն են:

Առավել ակտիվ դերակատարներն այս կամ այն կերպ կապված են Երևանում ՌԴ դեսպանատան, ռուսական հիմնադրամի հետ:

Հետևապես, քննարկված ապատեղեկատվական հրապարակումների հիմնական նպատակը հայաստանցիների աչքերում Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ «թշնամու» և «վտանգի», իսկ Ռուսաստանի Դաշնության՝ «անվտանգության երաշխավորի» ու «փրկարարի» կերպարի կերտումն ու խորացումն է:

*«Իրազեկ քաղաքացիների միավորում»
16.06.2017թ. Երևան*